ՏԵՂԵԿԱՆՔ
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ և ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 28. Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտք գործելը

~~1. Ապաստան հայցողները և փախստականները Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար չեն ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության:~~

1. Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար քրեական կամ վարչական պատասխանատվության միջոցներ չեն կիրառվում փախստականների, ինչպես նաև այն ապաստան հայցողների նկատմամբ, ովքեր ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգվում էր սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, մուտք են գործում Հայաստանի Հանրապետության տարածք կամ գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում առանց թույլատրության, պայմանով, որ նրանք անձամբ, առանց ձգձգման, ներկայանան Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին և մատնանշեն իրենց ապօրինի մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառը:

2. Այն դեպքում, երբ ապաստան հայցողը դիտավորյալ չի համագործակցում սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ուշացնում է անձը հաստատող վկայականի վավերականության ժամկետի երկարաձգումը կամ չի ենթարկվում սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղաշարժի սահմանափակումներին, ապա նա կարող է ենթարկվել պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով: